

Մարմաշենի մենաստանին կ'ընծայէ գիւղեր, խումբ մ'այգիներ, ջաղացներ, տներ ու կրպակներ (Ճիր. 148): Մաքենոցաց ուխտը Սուփան սիւնեցիէն կը ճոխանայ «բազում ընչիւք, նաեւ գեղօք եւ ազարակօք եւ այգեստանօք» (Որբ. 130): Տարսայիճ որբելեան՝ Տաթեւոյ վանուց կը նուիրէ «գեօղս վեց» եւ «գմեր ձեռատունկ այգին», կ'ըսէ. թէպէտեւ Սիւնեաց Յակոբ եպսն. արդէն վաղուց զարդարած էր զայն, տնկելով շրջակայքը «բազում այգիս... ձիթենիս եւ թզենիս եւ նոնենիս, եւ յամենայն մրգաց արար դրախտս զարմանալիս՝» եղբայրութեան ու կարօտելոց վայելման համար (նոյն, 305, 185): — Անոնք ունէին բազմաթիւ անասուններ եւս: «Ունկնդիր եմք բառաչման խաշանց մերոց», կը տրտնջէ Եղիշէ (217), ցուցնելով իրենց յօժարամիտ զբաղումն անոցմով: Թող պարգեւներէ հետ զհետէ յաւելուածները. զոր օրինակ Գագիկ արծրունի ի յիշատակ իւր հանգուցեալ եղբօր՝ Հայաստանի ընդհանուր մենաստանաց կը նուիրէ ձիեր ու ջորիներ, հանդերձ արջառոց եւ ոչխարաց հօտերով (Ործ. 324): Մաքենոցք Սուփանէ կ'ընդունի նաեւ եզանց ջոլիւրներ ու զուարակաց ջուկեր, անդեայք եւ ոչխարաց հօտեր (Որբ.